ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

№ 114-Ա

"6" օգոստոսի 2013թ

<<ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ՝ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏՐՎԱԾ ՏՆՕՐԵՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության <<Հանրակրթության մասին>> օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը հաստատելու մասին>> N 319-Ն որոշման հավելվածի 32-րդ և 34-րդ կետերով և համաձայն <<Կապանի թիվ 1 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի 2013 թվականի օգոստոսի 2-ի նիստի N 47 արձանագրության և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ներկայացուցչի գրավոր եզրակացության, **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հաստատել <<Կապանի թիվ 1 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ընտրության համար անցկացված մրցույթի օրենսդրության համապատասխանությունը:
2. Կազմակերպության ընտրված տնօրեն Լևոն Մարգարյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:
3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Վ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2013թ. օգոստոսի 6
ք. Կապան